

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբլոյանի, Գալուստ Սահակյանի, Մկրտիչ Մինասյանի, Գագիկ Մինասյանի, Արտակ Դավթյանի, Հակոբ Հակոբյանի և Կարինե Աճեմյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և

լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ համաձայն «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածների՝ համապատասխանաբար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ՄԻԱՎ-ով վարակված անձանց բուժման և հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը ևս իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում. խնդրի ամբողջական կարգավորման նպատակով առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև նշված օրենքներում:

Նույն հիմնավորմամբ անհրաժեշտ է լրացում կատարել նաև «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 7-րդ մասում՝ այն «անվճար» բառից հետո լրացնելով «կամ արտոնյալ պայմաններով» բառերով, ինչպես նաև ներկայացված բոլոր նախագծերում «արտոնյալ պայմաններում» բառերը փոխարինել «արտոնյալ պայմաններով» բառերով:

Իրավական տեխնիկայի առումով առաջարկում ենք՝

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ապրիլի» բառը փոխարինել «մարտի» բառով, «նոր մասով» բառերը՝ «նոր՝ 4-րդ մասով» բառերով, իսկ հոդվածը «արտոնյալ» բառից առաջ լրացնել «4.» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:

2. Նույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնել նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առկա համարակալումը:

3. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում «ՀՕ-474» թիվը փոխարինել «ՀՕ-474-Ն» թվով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջի:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջին տեղակալ Հայկ Դարբինյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-827³-16.02.2010-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (24 մայիսի 1993 թվականի, ՀՕ-57) 11-րդ հոդվածի 1-ին մասում.

ա) «անվճարե բառերից հետո լրացնել «կամ արտոնյալ պայմաններում բառերով:

բ) հանել «պետական բժշկական հիմնարկներում բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին, «Երեխայի իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների ընդունման անհրաժեշտության մասին

Առողջապահության ոլորտում պետության կողմից սահմանված առաջնահերթություն է բժշկական ծառայությունների, դեղերի եւ պարագաների մատչելիությունը եւ հասանելիությունը: Ինչպես սահմանում է ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը՝ տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից

Է բնակչության առողջության պահպանման ծրագրերի իրականացումը, արդյունավետ եւ մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը նպաստելը: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվել են մի շարք բժշկական ծառայություններ, որոնք ամբողջովին տրամադրվում են պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաեւ սոցիալական անապահով խմբեր, որոնք իրավունք ունեն բժշկական ծառայություններ ստանալ անվճար:

Որոշ ծառայությունների համար (օրինակ՝ հաշմանդամներին դեղերի տրամադրման դեպքում) պետությունը սահմանել է արտոնյալ պայմաններում պետական բյուջեի հաշվին մասնակի փոխհատուցում՝ հաշվի առնելով հիվանդների ֆինանսական պաշտպանվածության անհրաժեշտությունը: Մակայն գործնականում, բացի դեղերի տրամադրումից, նման արտոնյալ պայմաններ տրվում են նաեւ այլ բժշկական ծառայություններ եւ բժշկական պարագաներ տրամադրելու դեպքում, օրինակ՝ սիրտ-անոթային վիրահատությունների, հյուսվածքների եւ օրգանների փոխպատվաստման ժամանակ եւ այլն:

Ներկայացված նախագծերի փաթեթով առաջարկվում է սույն հարցը կարգավորել օրենքներով՝ սահմանելով անվճար եւ արտոնյալ պայմաններում բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունքը: